

Ստորև կը կրատարակենք Բարեգործականի Յունիս 11-ի գեկոյցը կարգ մը յապատումներով: ԽՄԲ.

2. Բ. Ը. Միութեան կեդրոն. վարչութիւնը հետեւեալ հետազոտութիւնը ստացած է Երեւանէն.—

«Հաստատում ենք ձեր Մայիսի վեցի ու Մայիսի քսանի հետախուզման ստացումը, որոնցով հաղորդում էք Երկու նուազով չորս հարիւր հազար տոլարի փոխադրութիւնը: Այդ կրկու դումարներն ստացուած են Մայիսի տասնութին եւ Յունիսի երեքին: Ծրանասյից ներգաղթողները շոգենաւերի համար ձեր կողմից ձեր տրամադրութեան տակ դրուած 16 միլիոն Ֆրանքի դումարը ձեր ընթացիկ հաշիւին փոխադրելու մասին դեռեւս տեղեկութիւն չունեցանք: Դո՛ւս նախութեամբ իմացանք յաւելուածական հանդանակութեան դումարը Մէկ Միլիոն Տոլարի բարձրացնելու լուրը: Ներգաղթի գործով Կառավարութեան Պատուիրակներին համապատասխան հրահանգներ են տրուած, Բարեգործականի տեղական Մարմինների հետ համագործակցելու եւ Հայրենակցականի պահանջներին ընթացք տալու մասին: Յարգանքներով:»

Երեւանէն, ներգաղթողներու Ընդունման եւ Տեղաւորման Կոմիտէի նախագահ Աստուածատրեան եւս նոյնիմաստ հեռագիր մը ուղղած է Միութեան վարչ. Պատուիրակին —

«Արտասահման մեկնող ներկայացուցիչներին հրահանգ է տրուած գործակցել Հայրենակցական Միութիւնների տեղի Մարմինների հետ, հաշուի առնելով Հայրենակցականների անդամների ուղարկումը ներգաղթի կազմակերպման ընթացքում:»

Ինչպէս որ իյայտ կուգայ վերոգրեալ երկու պաշտօնական հեռագիրներէն, 2. Բ. Ը. Միութեան կողմէ կատարուած ստիպողական դիմումներուն վրայ, Խ. Հայաստանի Կառավարութիւնը եւ ներգաղթողներու Կոմիտէն բարեհաճօրէն ազգու հրահանգներ տուած են ներգաղթի Պատուիրակներուն եւ Տեղ. Կոմիտէներուն, որ համագործակցին Միութեան տեղական Մարմիններուն հետ եւ հետեւանք տան Հայրենակցականներու մասին 2. Բ. Ը. Միութեան բրած յանձնարարութիւններուն:

Արդարեւ, անցեալ տարուան հայրենադարձի գործողութեանց առթիւ, պէտք եղած փութկոտութեամբ նկատի չառնուեցան Միութեան յանձնարարութիւնները, ապահովելու Մէկ Միլիոն Տոլարի Հանդանակութեան մասնակցող Հայրենակցականներու չքաւոր տեղացիներուն ներգաղթը: Այդ պատճառաւ Հայրենակցականներէն ուժանք դառնօրէն արտայայտեցին իրենց դժգոհութիւնը, որուն չարունակ արձագանգ տուին Միութեան ներկայացուցիչները, առանց սակայն զգ. սլի բարեփոխում մը տեսնելու:

Այդ ցուցաբերման վրայ չէր հաղորդուէր ձեր բողոքները ներկայացնելէ եւ այսօր ուրախ ենք որ Երեւանի պետական շրջանակները, իրենց շնորհաւորելի բարեացակամութեամբ, միանգամընդմիջտ արձատարիլ կ'ընեն այդպիսի չկամութիւններ, ճանչնալով 2. Բ. Ը. Միութեան եւ Հայրենակցական Միութիւններու անվիճելի իրաւունքը ներգաղթի առնչութեամբ:

Կեդր. վարչ. Ժողովը, իր վերջին նիստին մէջ, վերաքննելով Միութեան ՔայլիՓորնիոյ շրջանակին անջատման հարցը, քուէարկեց Ծրէզնոյի Համաժողովին մասնակցող Պատուիրակներուն, Պրք. Յ. Թուրուզեանի եւ Տ. Տիրատուրեանի տեղեկագրած Լզրակացութեանց գլխաւոր գիծերը:

Վերջնականապէս բանաձեւուած որոշմնադրին համաձայն, այդ կարեւոր շրջանը ըստ առաջնայն մաս կը կազմէ Ամերիկայի ամբողջական կազմակերպութեան, այսինքն Նիւ Եորքի Կեդր. Յանձնաժողովին, բայց կը վայելէ բացառիկ իրաւասութիւններ իր սեփական գործերուն տնօրինութեան համար:

Վարչ.— Պատուիրակ Պր. Վահան Մալէղեան, որ միանգամայն իբրեւ Ընդհ. Տնօրէն 39 տարինեղէ ի վեր սրտեռանդ ծառայած է 2. Բ. Ը. Միութեան, Կեդր. Ժողովին կողքն իվեր եւ Կեդր. Գրասենեակին գլուխը, իր յառաջացած տարիքին եւ յողնած վիճակին պատճառաւ իր հրաժարականը ներկայացուցած ըլլալով, Կեդր. վարչութիւնը ցաւ ի սիրտ հարկադրուեցաւ տեղի տալ իր թախանձանդին խնդրանքին առջեւ, հանգստեան կոչելով յառաջիկայ Աւագտեմբեր ամիսէն սկսեալ:

Կեդր. վարչ. Ժողովը որոշեց նպաստի հետեւեալ յատկուցումները ընել.— ա) Ռեժրակոծումէ աղէտեալ Սևրի Մուրատեան վարժարանին նորոգութեան համար 100,000 Ֆրանք:

բ) Մարտէյի Միութեան Կրտսերաց Լիկային, որուն կեդրոնատեղին 1943ին ուժրակոծուեցաւ, 1000 տոլար, նոր ընթերցասրահ—հաւաքատեղի մը վարձելու եւ կահաւորելու համար:

գ) Զինաստանի (Թարպիւնի շրջան) Հայ կարօտեալներու օգնութեան համար 500 տոլար, Ծանկհայի Հայ Բարեգ. Ընկերութեան միջոցաւ:

դ) Աթէնքի շրջանին վարժարաններու, դրամատուներու եւ այլ նպաստի ձեռնարկներուն համար 3500 տոլար, իսկ Սելանիկի շրջանին 2500 տոլար:

ե) Աթէնքի ամառնային քէմքինկին համար, յօգուտ տկարակազմ մանուկներու եւ պատանիներու, 2500 տոլար:

զ) Նոյնպէս, Յունաստանէն ներգաղթող տասը ուսուցիչներու եւ պաշտօնի վրայ մնացող կարօտ ուսուցիչներու համար 2500 տոլար:

Դրամական վարկերէն եւ նպաստներէն անկախաբար, Ռումանիոյ չքաւոր ներգաղթողներուն բաշխուելու համար Տատուրեան Տան միջոցով 5500 տոլար արժողութեամբ 46 հակ գործածուած հազուատեղէն զրկեցինք Քոնսթանդա: Այդ առթիւ, Տատուրեան եւ Ընկ. կողմէ եւս հինգ հակ ներքնապղեստ իբրեւ նուէր աւելցուեցաւ այս առաքումին վրայ:

Ման.— Նկատելով որ Ծրանասայէն կարելի չէ դրամական փոխանցում կատարել, արտածման արդելքին պատճառաւ, հեռագրուեցաւ Երեւանի թէ հանդանակուած 16 միլիոն Ֆրանքը Հայաստանի Կառավարութեան տրամադրութեան տակ դրուած է Ծրանասայի մէջ, որով հնար կ'ըլլայ Մարտէյէն մեկնող շոգենաւներուն վարձքը Ֆրանքով վճարել:

Վարչ.— Պատուիրակ Վ. ՄԱԼԷՉԵԱՆ